ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ ԵՓՐԵՄ Բ-Ի ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ 60-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ, ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Մենք՝ Եփրեմ Բ կաթողիկոս և Պատրիարք համայն Վրաստանի, Նորին Սրբություն, Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս Ամենայն Հայոց, Մեր հարգելի եղբայր Վազգեն Ա-ին եղբայրաբար ողջունում ենք և պատվում քրիստոնեական սիրո համբույրով:

Այսօր ամբողջ հայ բարեպաշտ ժողովրդի հնադարյան կենտրոն ս. Էջմիածնից երաժշտական հաճելի մեղեդիների ղողանջներով ավետվում է սրբալույս մյուռոնի օրհնության և Նորին Սրբություն Ամենայն Հայոց կաթողիկոսի՝ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու պետի՝ Վազգեն Ա-ի ծննդյան 60-ամյակի հանդիսությունների տոնակատարությունը:

Ձերդ Սրբությանը հայտնի է, որ բազում գիտելիքների իմացություն, փորձ և մեծ զգուշություն է պահանջվում եկեղեցու նավը վարելու, առաջնորդելու և հաղթահարելու ժամանակակից ծովի փոթորկալից ալիքները և այն դուրս բերելու խաղաղ նավահանգիստ: Ինչպես ձեր, այնպես էլ մեր սուրբ եկեղեցիների Կալլիստրատ և Գևորգ Սրբազնագույն Պատրիարքները եկեղեցին վարելու մեծ փորձառություն ունեին: Նրանք մեզ համար հանդիսանում են լուսե այուներ:

Նրանց գործունեությունը չափազանց օրինակելի է մեզ համար:

Ձերդ Սրբություն,

Ձեր գահակալության շրջանին Ձեր ժողովրդի օժանդակությամբ Դուք հաջողեցրիք շատ բան անել.

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԺՈՂՈՎԻ

1. Բարեզարդեցիք Էջմիածնի Մայր տաճարը.
2. Ընդարձակեցիք և շատ գեղեցիկ կահավորեցիք Վեհարանը.
3. Պատշաճ բարձրության վրա դրիք հոգևոր ճեմարանը՝ նոր սպասավորներ պատրաստելու գալիք սերնդի համար.
4. Բարձր հիմքերի վրա դրիք ամսաթերթը.
5. Սերտ կապեր հաստատեցիք արտասահմանի եկեղեցիների հետ.
6. Պայքարում եք համայն աշխարհում խաղաղություն հաստատելու համար:

Այս բոլորի համար փառք Ամենակալին, որ մեզ Իր ողորմությունից չի զրկում:

Եղբայրաբար ողջագուրելով Ձեզ, հոգու խորը զգացումներով շնորհավորում ենք Ձերդ Սրբության ծննդյան 60-ամյակը և օրհնում հանդիսությանց մասնակիցներին, հյուրերին և ամբողջ հայ եկեղեցին լավագույն մաղթանքներով:

Թող Աստուծո օրհնությունը լինի բոլորի վրա:

ԵՓՐԵՄ Բ

Կաթողիկոս-պատրիարք համայն Վրաստանի

5 հոկտեմբերի 1969 թ.,
Ք. Թբիլիսի

ПА-11.937